ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ

Ղ Ե Կ Ա Վ Ա Ր

Երևան – 10, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 1

« » հունիսի 2018 թ. N

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ - ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ
պարոն ԱՐԱ ՍԱՂԱԹԵԼՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սաղաթելյան

Համաձայն «Ազգային ժողովի կանոնակարգ» Հայաստանի Հանրապետության սահմանադրական օրենքի 66-րդ և 77-րդ հոդվածների՝ Ձեզ ենք ներկայացնում՝

1) «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթի (Պ-319-16.05.2018-ՏՀ-011/0) վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կառավարության առաջարկությունը.

2) Հայաստանի Հանրապետության վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող) նշանակելու մասին» N 710 - Ա որոշումը:

Հարգանքով՝

ԷԴՈՒԱՐԴ ԱՂԱՋԱՆՅԱՆ

«ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՓԱԹԵԹԻ (Պ-319-16.05.2018-ՏՀ-011/0) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆԸ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը, նկատի ունենալով այն հանգամանքը, որ ներկայացված օրենքների նախագծերի փաթեթն ուղղված է տրամադրված լիցենզիաների, ինչպես նաև դրանց կասեցման (դադարեցման) հետ կապված համակարգային իրավակարգավորումների փոփոխմանը, առաջարկում է ներկայացված նախագծերով քննարկվող գործող օրենքների հոդվածները թողնել անփոփոխ՝ հաշվի առնելով ներկայացված օրենքների նախագծերի և դրանց ընդունման հիմնավորման վերաբերյալ ստորև ներկայացված հանգամանքները՝

1. Համաձայն նախագծերի փաթեթին կից ներկայացված հիմնավորման՝ նախագծերի փաթեթով առաջարկվում է մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումներ իրականացնելու իրավունք ունեցող անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց և տրանսպորտի բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնող մյուս սուբյեկտներին ազատել պետական տուրքի չվճարման համար տույժ վճարելու պարտականությունից: Սակայն, նախագծերով առաջարկվող կարգավորումների արդյունքում, ըստ էության ստացվում է, որ վերջիններս վերաբերում են ոչ միայն նշված, այլ ընդհանրապես արտոնագրման, թույլտվության, լիցենզավորման, որակավորման կամ ծանուցման ենթակա գործունեության բնագավառներում գործունեություն ծավալող անձանց վրա:

Անհրաժեշտ է նկատի ունենալ նաև, որ թե «Լիցենզավորման մասին», թե «Պետական տուրքի մասին» օրենքների փոփոխվող դրույթները հիմնականում վերաբերում են առհասարակ լիցենզավորման և պետական տուրքի վճարման հետ կապված հարաբերություններին՝

անկախ լիցենզիայի տեսակից կամ լիցենզավորված անձից՝ ներառելով իրավահարաբերությունների շատ ավելի լայն տիրույթ, քան նկարագրվում է նախագծերին կից ներկայացված հիմնավորմամբ:

Ըստ այդմ, առկա է հակասություն նախագծերի փաթեթի և վերջինիս հիմնավորման միջև: Մասնավոր դեպքերի նկարագրությամբ իրավիճակային այսպիսի լուծումների առաջադրումն ընդունելի չէ և օրենսդրական կարգավորումների պրակտիկ կիրառման ընթացքում կհանգեցնի լուրջ խնդիրների:

2. «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագծի՝

1) 1-ին հոդվածի 1-ին կետով առաջարկվում է «Լիցենզավորման մասին» օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասում «կարող է կասեցվել» բառերը փոխարինել «կասեցվում է» բառերով՝ օրենքով նախատեսված հիմքերի առկայության դեպքում լիցենզիայի գործողության կասեցումը դարձնելով իմպերատիվ: Մինչդեռ, առաջարկվող փոփոխությունը, համակարգային կապի մեջ դիտարկելով նույն հոդվածի այլ կարգավորումների հետ, կարող ենք փաստել, որ առաջանում է հակասություն: Այսպես, «Լիցենզավորման մասին» օրենքի 36-րդ հոդվածի 5-րդ մասը նույն հոդվածի 1-ին մասի 9-րդ կետով նախատեսված հիմքի դեպքում սահմանում է լիազոր մարմնի՝ դիմումը մերժելու հայեցողությունը, եթե դա նախատեսված է օրենքով կամ լիցենզավորման կարգերով կամ, եթե լիցենզիայի գործողության կասեցման հետևանքով ուղղակի վնաս կհասցվի պետական և հասարակական անվտանգությանը, հասարակական կարգին, հանրության առողջությանն ու բարքերին, այլոց իրավունքներին և ազատություններին, պատվին ու բարի համբավին: Հարկ է նշել նաև, որ քննարկվող փոփոխության վերաբերյալ նախագծի հիմնավորման մեջ ևս ներկայացված չեն անհրաժեշտ տեղեկություններ, ինչը ևս հնարավորություն չի տալիս գնահատելու առաջարկվող կարգավորման հիմնավորվածությունը:

Նույնը վերաբերում է նաև նախագծի 2-րդ հոդվածի 1-ին կետին.

2) 2-րդ հոդվածի՝

ա. 2-րդ կետը, որպես լիցենզիայի դադարեցման հիմք, նախատեսում է անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձին տրված լիցենզիայի գործողությունը ամսական, եռամսյակային կամ տարեկան պետական տուրքը չվճարելու հիմքով («Լիցենզավորման մասին» օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետ) կասեցնելու դեպքում 6 ամսվա ընթացքում կասեցման հիմք հանդիսացող խախտումը չվերացնելը: Միաժամանակ, նախատեսվում է, որ լիցենզավորված անձը վերոնշյալ հիմքով լիցենզիայի գործողությունը դադարեցվելուց առնվազն մեկ ամիս առաջ տեղեկացվում է լիցենզիայի գործողությունը դադարեցնելու մասին: Մինչդեռ, նախագծային դրույթների ուսումնասիրությունից պարզ չէ, թե որն է տեղեկացնելու նպատակը, ինչպես նաև դրա իրավական հետևանքները: Արդյոք սա ենթադրում է, որ վարչական մարմինն ստուգում է, որ լիցենզավորված անձի մոտ «բացակայում է վերջինիս կողմից լիցենզիան պահպանելու որևէ շահագրգռվածություն»-ը (ըստ նախագծի հիմնավորման): Այս դեպքում կստացվի, որ օրենքը բացառապես վարչական մարմնին է վերապահում լիցենզավորված անձի փոխարեն իրեն տրված լիցենզիայի ճակատագրին հետևելու պարտականությունը՝ դրանով իսկ լիցենզավորված անձանց ազա-տելով պետության կողմից տրամադրված որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքի նկատմամբ պատասխանատու մոտեցում դրսևորելու «պարտականությունից»: Ասվածն անհրաժեշտ է դիտարկել հասարակական կյանքի հատկապես այնպիսի ոլորտներում լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների տեսանկյունից, որոնք առնչվում են մարդու առողջությանը,

բ. 4-րդ կետով առաջարկվող լրացման անհրաժեշտությունը բացակայում է, քանի որ վարչական ակտն ուժի մեջ մտնելու հետ կապված հարաբերություններն արդեն իսկ կարգավորված են «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով,

3) Գործունեության կասեցման ժամանակահատվածում չվճարած պետական տուրքի գումարների նկատմամբ հաշվարկված տույժերի գումարը չի կարող էական ֆինանսական բեռ հանդիսանալ ուղևորափոխադրումներ իրականացնող ֆիզիկական անձանց համար, ինչպես նշված է հիմնավորման մեջ, քանի որ, օրինակ, ամսական պետական տուրք վճարող

մարդատար-տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումներ կազմակերպող տնտեսվարող սուբյեկտների համար 6 ամսվա համար հաշվարկված տույժերի գումարը կազմում է վճարվելիք տուրքի գումարի 13.5%-ը կամ 1620 դրամ:

3. «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» օրենքի նախագծի՝

1) 1-ին հոդվածով նախատեսվում է ուժը կորցրած ճանաչել «Պետական տուրքի մասին» օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի չորրորդ պարբերությունը, ըստ որի՝ պետական տուրք վճարողները պարտավոր են սույն օրենքով սահմանված դեպքերում պետական բյուջե վճարել պետական տուրքը ժամանակին չվճարելու համար հաշվարկված տույժի գումարները: Ընդ որում, «Պետական տուրքի մասին» օրենքի 6.1-ին հոդվածի 1-ին մասի 1-ին կետի և 35-րդ հոդվածի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ հիշյալ օրենքով սահմանվում են տույժեր տարեկան պետական տուրքի գումարների վճարումն ուշացնելու համար: Հարց է առաջանում՝ արդյոք նախագծերի ներկայացված փաթեթով առաջարկվող կարգավորումները կիրառելի են լիցենզավորված ֆիզիկական անձանց նկատմամբ, ովքեր օգտվում են պետական տուրքի ամսական կամ եռամսյակային վճարման դրույքաչափերից.

2) 4-րդ հոդվածով նախատեսվում է ուժը կորցրած ճանաչել «Պետական տուրքի մասին» օրենքի 35-րդ հոդվածը, որով սահմանվում են օրենքը խախտելու համար պատասխանատվություն նախատեսող դրույթները: Ընդ որում, հիշյալ հոդվածով նախատեսված խախտումների սուբյեկտներ են նաև պաշտոնատար անձինք, ինչպես նաև տարեկան պետական տուրք վճարողները, ովքեր պարտավորվում են վճարել չվճարած պետական տուրքի գումարը, ինչպես նաև դրա համար հաշվարկած տույժը.

3) 6-րդ հոդվածի 2-րդ կետի՝

ա. համաձայն՝ պետական տուրքի սահմանված ժամկետում չգանձման կամ չվճարման համար տույժի վճարման պարտավորություն ունեցող անձինք ազատվում են մինչև նախագծով սահմանվող դրույթներն ուժի մեջ մտնելը հաշվարկված տույժերը վճարելու պարտականությունից, իսկ արդեն վճարված տույժի գումարներն անձի դիմումի հիման վրա ենթակա են հաշ-

վանցման մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների կազմակերպման նպատակով լիցենզիա ստանալու համար պետական տուրքի վճարման պարտավորության դիմաց: Կարծում ենք, որ անհրաժեշտ է վերանայել առաջարկվող մոտեցումը, քանի որ ներկայացված ձևաչափով վերջինս անհավասար պայմաններ է առաջացնում, օրինակ, նախկինում արդեն իսկ կուտակված բոլոր տույժերը վճարած և այլևս գործունեություն չծավալող անձանց և ներկայումս գործունեություն ծավալող անձանց միջև, որոնք, ըստ էության ազատվում են բոլոր տույժերը վճարելու պարտավորությունից: Նույնը վերաբերում է նաև միայն մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների կազմակերպման ոլորտում գործունեություն ծավալող անձանց արդեն իսկ վճարված տույժերը պետական տուրքի վճարման պարտավորության դիմաց հաշվանցելու հնարավորություն ընձեռելուն, ինչը նույնպես անհավասար պայմաններ է ստեղծում նրանց և, օրինակ, լիցենզավորման ենթակա այլ գործունեություն ծավալող անձանց միջև,

բ. առաջարկվող կարգավորումը խնդրահարույց է այն առումով, որ այն վերաբերում է պետական տուրքի վճարման պարտականություն ունեցող բոլոր անձանց՝ անկախ նրանից, թե ինչ ծառայություններից կամ գործողություններից է օգտվում պետական տուրք վճարելու պարտականություն ունեցող անձը: Այսինքն, առաջարկվող մոտեցմամբ բոլոր ծառայությունների կամ գործողությունների մասով կվերանան պատասխանատվության միջոցները պետական տուրք չվճարելու կամ չգանձելու համար, ինչը խիստ խոցելի կդարձնի տուրքի վճարման գործընթացը: Այդ իսկ տեսանկյունից նման մոտեցումներն անընդունելի են:

4. «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծով առաջարկվող վարչական պատասխանատվության սահմանված չափի փոփոխությունն ընդունելի չէ:

Ամփոփելով վերոգրյալը՝ գտնում ենք, որ ներկայացված խմբագրությամբ նախագծերը ոչ միայն չեն լուծում հիմնավորման մեջ ներկայացված խնդիրը, այլև վտանգում են փոփոխվող

օրենքների կարգավորման առարկա հանդիսացող իրավահարաբերությունների բնականոն ընթացքը:

Այդուհանդերձ Հայաստանի Հանրապետության կառավարությունն իր պատրաստակամությունն է հայտնում համագործակցել օրենսդրական նախաձեռնության հեղինակների հետ՝ հիմնավորման մեջ նշված խնդիրների բավարար կարգավորման ուղղությամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՐՉԱՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 հունիսի 2018 թվականի N 710 - Ա

ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ (ՀԱՐԱԿԻՑ ԶԵԿՈՒՑՈՂ) ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Ազգային ժողովի կանոնակարգ» սահմանադրական օրենքի 66-րդ հոդվածի 2-րդ մասը՝ արդարադատության նախարարի առաջին տեղակալ Արթուր Հովհաննիսյանին նշանակել Ազգային ժողովում «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթը (Պ-319-16.05.2018-ՏՀ-011/0) քննարկելիս կառավարության ներկայացուցիչ (հարակից զեկուցող):

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏ Ն. ՓԱՇԻՆՅԱՆ

2018 թ. հունիսի 11
Երևան

ՆԱԽԱԳԻԾ

Պ-319-16.05.2018-ՏՀ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Լիզենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության 2001 թվականի մայիսի 30-ի ՀՕ-193 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 36-րդ հոդվածի՝

1) 1-ին մասում «կարող է կասեցվել» բառերը փոխարինել «կասեցվում է» բառով:

2) 1-ին մասի 11-րդ կետում «տարեկան» բառից առաջ լրացնել «ամսական, եռամսյակային կամ» բառերը:

Հոդված 2. Օրենքի 37-րդ հոդվածի՝

1) 1-ին մասում «կարող է դադարեցվել» բառերը փոխարինել «դադարեցվում է» բառով:

2) 1-ին մասը լրացնել նոր՝ 8.1-ին կետով.

«8.1) սույն օրենքի 36-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետով նախատեսված հիմքով անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձին տրված լիցենզիայի գործողությունը կասեցվելու դեպքում, եթե կասեցվելուց հետո վեց ամսվա ընթացքում կասեցման հիմք հանդիսացող խախտումը չի վերացվել:

Սույն օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասին 8.1-ին կետի հիմքով լիցենզիայի գործողությունը դադարեցվելուց առնվազն մեկ ամիս առաջ անձը տեղեկացվում է լիցենզիայի գործողությունը դադարեցվելու մասին:».

3) 7-րդ մասը շարադրել նոր խմբագրությամբ.

«7. Սույն հոդվածի 1-ին մասի 2-րդ, 7-րդ և 8.1-ին կետերով նախատեսված հիմքերով լիցենզիայի գործողությունը դադարեցվում է լիցենզավորող մարմնի որոշմամբ:».

4) 11-րդ մասը լրացնել նոր նախադասությամբ. «Սույն հոդվածի 1-ին մասի 8.1-ին կետով նախատեսված հիմքով լիցենզիայի գործողությունը համարվում է դադարեցված լիցենզավորող մարմնի որոշումը լիցենզավորված անձին հանձնելու օրվան հաջորդող օրվանից:

Հոդված 3. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

2. Սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո դադարեցվում է անհատ ձեռնարկատեր չհանդիսացող այն ֆիզիկական անձանց լիցենզիայի գործողությունը, որոնց լիցենցիայի գործողությունն օրենքն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ կասեցված է ոչ պակաս, քան մեկ տարի, և կասեցման հիմք հանդիսացող խախտումը սույն օրենքն ուժի մեջ մտնելուց հետո վեց ամսվա ընթացքում չի վերացվում: Լիցենզավորված անձինք առնվազն մեկ ամիս առաջ տեղեկացվում են լիցենզիայի գործողությունը դադարեցվելու մասին:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-319[1]-16.05.2018-ՏՀ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի չորրորդ պարբերությունը ճանաչել ուժը կորցրած:

Հոդված 2. Օրենքի 6.1-րդ հոդվածի 1-ին մասի՝
1) 1-ին կետից հանել «ինչպես նաև դրանց վճարումն ուշացնելու համար սույն օրենքով սահմանված տույժերի գումարների վճարմամբ,» բառերը.
2) 3-րդ կետի երկրորդ պարբերությունը ճանաչել ուժը կորցրած:

Հոդված 3. Օրենքի 21-րդ հոդվածի 1-ին մասի ե) ենթակետը ճանաչել ուժը կորցրած:

Հոդված 4. Օրենքի 35-րդ հոդվածը ճանաչել ուժը կորցրած:

Հոդված 5. Օրենքի 36.1-ին հոդվածի՝
1) 1-ին մասից հանել «(տուրք, տույժ)» բառերը.
2) 4-րդ մասը ճանաչել ուժը կորցրած:

Հոդված 6. Եզրափակիչ մաս և անցումային դրույթներ
1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող օրվանից:
2. Մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքով նախատեսված պետական տուրքի՝ սահմանված ժամկետում չգանձման կամ չվճարման համար տույժի վճարման պարտավորություն ունեցող անձինք ազատվում են մինչև սույն օրենքն ուժի մեջ մտնելը հաշվարկված տույժերը վճարելու պարտականությունից, իսկ արդեն վճարված տույժի գումարները անձի դիմումի հիման վրա ենթակա են հաշվանցման մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների կազմակերպան նպատակով լիցենզիա ստանալու համար պետական տուրքի վճարման պարտավորությունների դիմաց:

ՆԱԽԱԳԻԾ

Պ-319[2]-16.05.2018-ՏՀ-011/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության 1985 թվականի դեկտեմբերի 6-ի օրենսգրքի 137.2 -րդ հոդվածի 7-րդ մասում «հիսնապատիկի» բառը փոխարինել «հարյուրապատիկի» բառով:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԼԻՑԵՆԶԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ», «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՎ «ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՍԳՐՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ

Ընթացիկ իրավիճակը և իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը

Ներկայումս տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումներ իրականացնելու իրավունք վերապահված է նաև անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց: Օրենսդիրը վերջիններիս պետական տուրքը վճարելու հնարավորություն է տվել ոչ միայն տարեկան, այլև եռամսյակային կամ ամսական կտրվածքով:

Իր հերթին, «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածով պատասխանատվություն է նախատեսում պետական տուրքի վճարումն ուշացնելու համար: Մասնավորապես՝ հիշյալ հոդվածի երրորդ պարբերության համաձայն՝ «Սույն օրենքով սահմանված կարգով պետական տուրքի վճարման ժամկետի հետաձգման գծով արտոնություն ունեցող վճարողի կողմից պետական տուրքի վճարման համար սահմանված ժամկետներում վճարումը, ինչպես նաև սույն օրենքով սահմանված տարեկան պետական տուրքերի վճարման համար սահմանված ժամկետներում վճարումը չկատարելու դեպքում բյուջե չվճարված պետական տուրքի գումարները ենթակա են վճարողից բռնագանձման պետական բյուջե՝ ժամկետանց յուրաքանչյուր օրվա համար 0.075 տոկոսի չափով հաշվարկված տույժի հետ միասին»:

Պետական տուրքի չվճարման համար տույժը կիրառվում է դրա վճարման ժամկետից անցած ամբողջ ժամանակաշրջանի համար, բայց ոչ ավելի, քան 365 օրվա համար:

«Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքի համաձայն՝ պետական տուրքը չվճարելը հիմք է լիցենզիայի գործողությունը կասեցնելու համար: Ընդ որում, կասեցման ամբողջ ժամանակահատվածում հաշվարկվում է տույժ՝ «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով: Իսկ լիցենզիայի գործողությունը մնում է կասեցված մինչև պետական տուրքի վճարումը:

Խնդիրը նրանում է, որ «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքը չի նախատեսում լիցենզիայի գործողությունը դադարեցնելու հնարավորություն այն դեպքում, երբ տևական կասեցումից հետո լիցենզավորված անձը չի կատարումը իր պարտականությունը, և բացակայում է վերջինիս կողմից լիցենզիան պահպանելու որևէ շահագրգռվածություն: Նման իրավակարգավորման պայմաններում լիցենզիայի գործողությունը մնում է կասեցված երկարատև և անորոշ ժամանակահատվածում, իսկ լիազոր մարմինը պարտավոր է այդ ժամանակահատվածի համար հաշվարկել պետական տուրքի չվճարման համար նախատեսված տույժի գումարները:

Միաժամանակ, կասեցման ժամանակահատվածում պետական տուրքի չվճարման համար տույժի նախատեսումը էական ֆինանսական բեռ է հանդիսանում ինչպես ուղևորափոխադրումներ իրականացնող ֆիզիկական անձանց, այնպես էլ տրանսպորտի բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնող մյուս սուբյեկտների համար: Վերջիններիս կողմից պետական տուրքի չվճարման համար հաշվարկված տույժի գումարների վճարման անկարողությունը հաճախ խոչընդոտում է շարունակելու հետագա գործունեությունը:

Իր հերթին, «Լիցենզավորման մասին» ՀՀ օրենքը լիցենզիայի գործողությունը կասեցնելու հնարավորություն նախատեսում է միայն տարեկան պետական տուրքը չվճարելու պարագայում: Մինչդեռ ներկայումս տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումներ իրականացնող անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց համար նախատսվում է ոչ միայն տարեկան, այլև ամսական և եռամսյակային պետական տուրք, որոնք ժամանակին չվճարելը ևս պետք է հիմք հանդիսանա լիցենզիայի գործողությունը կասեցնելու համար:

Ներկայումս Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգիրքը առանց լիցենզիայի տաքսի ծառայություններ մատուցելու համար նախատեսում է վարչական տույժ նվազագույն

աշխատավարձի հիսնապատիկի չափով, որը հաճախ բավարար չի լինում նշված իրավախախտումները կանխարգելելու համար:

Առաջարկվող կարգավորման բնույթը

Առաջարկվող իրավակարգավորումներով նախատեսվում է տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումներ իրականացնող անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց լիցենզիայի գործողությունը դադարեցնելու հիմք, եթե լիցենզիայի գործողությունը կասեցնելուց հետո վեց ամսվա ընթացքում կասեցման հիմք հանդիսացող խախտումը չի վերացվել, այսինքն՝ պետական տուրքը չի վճարվել: Նշված հիմքով լիցենզիայի գործողությունը դադարեցնելուց առնվազն մեկ ամիս առաջ անձը տեղեկացվում է լիցենզիայի գործողությունը դադարեցվելու հնարավորության մասին: Պետական տուրքի չվճարման հիմքով լիցենզիայի գործողության դադարեցումն իրականացվում է լիցենզավորող մարմնի որոշմամբ՝ առանց դատական կարգի:

Միաժամանակ, ինչպես մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումներ իրականացնելու իրավունք ունեցող անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձինք, այնպես էլ տրանսպորտի բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնող մյուս սուբյեկտներն ազատվում են պետական տուրքի չվճարման համար տույժ վճարելու պարտականությունից: Այս դրույթը տարածվում է նաև մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը պետական տուրքի չվճարման համար տույժի վճարման պարտականություն ունեցող անձանց վրա, իսկ արդեն վճարված տույժի գումարները անձի դիմումի հիման վրա կարող են հաշվանցվել մարդատար-տաքսի ավտոմոբիլով ուղևորափոխադրումների կազմակերպան լիցենզիա ստանալու համար պետական տուրքի վճարման պարտավորությունների հաշվին:

Տրանսպորտի բնագավառում օրենքով սահմանված դեպքերում առանց լիցենզայի գործունեություն իրականացնելու դեպքերի կանխագելման նպատակով խստացվել է վարչական պատասխանատվությունը՝ նախատեսված տուգանքը սահմանելով նվազագույն աշխատավարձի հարյուրապատիկի չափով: Խնդիրը նրանում է, որ նշված իրավախախտման համար սահմանված տուգանքների չափերը փոքր լինելու պատճառով արդյունավետ չեն: Նախատեսվող իրավակարգավորումը հնարավոր իրավախախտներին հնարավորություն կտա օրենքի խախտման և ֆինանսական օգուտ ստանալու հնարավորությունների միջև ընտրություն կատարելիս խուսափել օրենքը խախտելու գայթակղությունից: Միաժամանակ, առաջարկվում է վերացնել «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածով նախատեսված՝ պաշտոնատար անձանց կողմից պետական տուրքը ժամանակին չգանձելու հետևանքով նախատեսված պատասխանատվությունը: Պատասխանատվությունից ազատվում են նաև մինչև նշված օրենքն ուժի մեջ մտնելը «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված պետական տուրքի՝ սահմանված ժամկետում չգանձման համար տույժի վճարման պարտավորություն ունեցող անձանց վրա:

Ակնկալվող արդյունքը

Առաջարկվող իրավակարգավորմամբ հնարավորություն կստեղծվի դադարեցնել այն ֆիզիկական անձանց լիցենզիայի գործողությունը, որոնք տևականորեն չեն կատարում պետական տուրքի վճարման իրենց պարտականությունը և կասեցման ժամանակահատվածում որևէ շահագրգռվածություն չեն ցուցաբերում լիցենզիայի գործողությունը պահպանելու համար՝ կամովին դիմում չներկայացնելով լիցենզիայի գործողությունը դադարեցնելու վերաբերյալ: Արդյունքում կթեթևանա վարչական բեռը, լիազոր մարմինը հարկադրված չի լինի հաշվարկել պետական տուրքի և դրա չվճարման համար տույժի գումարներ և միջոցներ ձեռնարկել դրանք բռնագանձելու ուղղությամբ այն դեպքում, երբ լիցենզիայի իրավատերը փաստացի չի օգտվում լիցենզիայից:

Մյուս կողմից, տրանսպորտի բնագավառում լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնող սուբյեկտները տույժի վճարման պարտավորությունից ազատելով՝ բարենպաստ պայմաններ կստեղծվեն վերջիններիս հետագա գործունեության իրականացման համար՝ որպես անհրաժեշտ նախապայման դիտարկելով միայն օրենքով սահմանված պետական տուրքի վճարման պարտականության կատարումը:

Առանց լիցենզիայի տաքսի ծառայություններ մատուցելու համար վարչական պատասխանատվության խստացումը հնարավորություն կտա կրճատել այս ոլորտում իրավախախտումների թիվը: